Հավելված N1
Հայաստանի Հանրապետության
պետական եկամուտների կոմիտեի նախագահի
2020 թվականի ապրիլի 17-ի
N 337-Ն հրամանի

Օրինակելի ձև

ՀԻՄՆԱԴՐԱՄՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՀՐԱՊԱՐԱԿՎՈՂ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ
ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
Հիմնադրամի հոգաբարձուների
խորհրդի 12-10-2020 թ. որոշմամբ
ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
հիմնադրամի 2019 թ. գործունեության մասին

1. Հիմնադրամի՝		
1.1 Լրիվ անվանումը		«ՍՔՈԼԱԵ ՄՈՒՆԴԻ ԱՐՄԵՆԻԱ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ
1.2 Գտնվելու վայրը		ԵՐԵՎԱՆ ԿԵՆՏՐՈՆ ԿԵՆՏՐՈՆ ԹԱՂԱՄԱՍ ՄԵԼԻՔ ԱԴԱՄՅԱՆ 2/2
1.3 Պետական գրանցման համարը		222.160.872300
1.4 Պետական գրանցման տարին, ամիսը, ամսաթիվը		2015-09-18
1.5 ՀՎՀՀ-ն		02642122
1.6 Հեռախոսը (այդ թվում՝ բջջային)		+(374)094445465
1.7 Պաշտոնական ինտերնետային կայքը		http://scholae-mundi.org/
1.8 Էլեկտրոնային փոստը		info@scholae-mundi.org
2. Հիմնադրի անուն, ազգանուն կամ անվանում՝		
3. Հոգաբարձուների խորհրդի անդամների անուն, ազգանուն՝		
4. Կառավարչի անուն, ազգանուն՝		
Էդգար Զաքոյան		
5. Աշխատակազմում ընդգրկված անձանց քանակը	24	
6. Անձեռնմխելի կապիտալի չափը	0	
7. Անձեռնմխելի կապիտալի կառավարումից ստացված եկամուտ	0	
8. Ֆինանսավորման աղբյուրները՝		
8.1 Ֆինանսավորումն ըստ խմբերի	8.2 Ծրագրի անվանումը	8.3 Չափը
8.1.1 Պետական և համայնքային բյուջեներից դրամական մուտքեր		
8.1.2 Իրավաբանական անձանցից դրամական մուտքեր		
	"MADE", "DILIJAN COMMUNITY CENTER", "DIALOGUE IN THE DARK", "ENTERPRISE DILIJAN", "SCHOLARSHIP AND PARTNERSHIP", "EUROPEAN CULTURAL PARLAMENT", վարչական	168707187
8.1.3 Ֆիզիկական անձանցից դրամական մուտքեր		
	"JUST DILIJAN IT"	358983088

Digitally signed by
AMIRYAN MARIYA
7005780302
Date: 2020.10.20
22:15:02 AMT

	"DILIJAN COMMUNITY CENTER"	5919062
9. Հիմնադրի ներդրումը՝		
9.1 Դրամական միջոցներ	56844030	
9.2 Գույք	9.2.1 Տեսակը	9.2.2 Արժեքը
10. Նվիրատվությունները/ նվիրաբերությունները		
10.1 Նվիրատուները/նվիրաբերողներն ըստ խմբերի՝	10.2 Նվիրված/նվիրաբերված գույք	
	10.2.1 Տեսակը	10.2.2 Արժեքը
10.1.1 Հայաստանի Հանրապետություն/համայնքներ		
10.1.2 Իրավաբանական անձինք		
	գույք	21476248
10.1.3 Ֆիզիկական անձինք		
11. Իրականացված ծրագրերը՝		
11.1 Ծրագրի անվանումը	11.2 Ծախսված գումարը	
"Just Dilijan It"	329992090	
"MADE"	43732791	
"Dilijan Community Center"	53881711	
"Enterprise Dilijan"	1283284	
"Scholarships and partnerships"	70920326	
"Dialogue in the Dark"	9350795	
"European Cultural Parlament"	14591615	
12. Ֆինանսական տարում օգտագործված միջոցների ընդհանուր չափը	615358838	
13. Կանոնադրական նպատակների իրականացմանն ուղղված ծախսերի չափը	523752612	

Նշումներ՝

Կից ներկայացվում է աուդիտորական եզրակացությունը՝ 28 թերթից:
թերթերի քանակը

Հիմնադրամի տնօրեն _____
ստորագրությունը, անունը, ազգանունը

Գլխավոր հաշվապահ _____
ստորագրությունը, անունը, ազգանունը

Ֆինանսական հաշվետվություններ
Անկախ աուդիտորի եզրակացություն

«Սքոլաե Մունդի Արմենիա» բարեգործական հիմնադրամ

31 դեկտեմբերի 2019թ.

Բովանդակություն

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն	6
Համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվություն	7
Զուտ ակտիվներում փոփոխությունների մասին հաշվետվություն	8
Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն	9
Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ	11

GrantThornton

Անկախ աուդիտորի եզրակացություն

Գրանթ Թորնթոն ՓԲԸ
ՀՀ, ք.Երևան 0012
Վաղարշյան 8/1
Հ. + 374 10 260 964
Ֆ.+ 374 10 260 961

Grant Thornton CJSC
8/1 Vagharshyan Str.
0012 Yerevan, Armenia
T + 374 10 260 964
F + 374 10 260 961

«Սքոլաե Մունդի Արմենիա» բարեգործական հիմնադրամի հոգաբարձուների խորհրդին

Կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել «Սքոլաե Մունդի Արմենիա» բարեգործական հիմնադրամի (Հիմնադրամ) ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը՝ 2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա համապարփակ ֆինանսական արդյունքի, զուտ ակտիվներում փոփոխությունների և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները՝ ներառյալ հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականության ամփոփ նկարագիրը:

Մեր կարծիքով՝ կից ֆինանսական հաշվետվությունները տալիս են Հիմնադրամի՝ 2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի և նույն ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքների ու դրամական հոսքերի ճշմարիտ և իրական պատկերը՝ համաձայն Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ-ներ):

Կարծիքի հիմք

Մենք աուդիտն անցկացրել ենք աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ-ներ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է այս եզրակացության՝ *«Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար»* բաժնում: Մենք անկախ ենք Հիմնադրամից՝ համաձայն Հաշվապահների էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակված *«Պրոֆեսիոնալ հաշվապահի էթիկայի կանոնագրքի»* (ՀԷՄՍԽ կանոնագիրք), և պահպանել ենք էթիկայի այլ պահանջները՝ համաձայն ՀԷՄՍԽ կանոնների և Հայաստանի Հանրապետությունում ֆինանսական հաշվետվությունների աուդիտին վերաբերող էթիկայի պահանջների: Մենք համոզված ենք, որ ձեռք ենք բերել բավարար համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր կարծիքն արտահայտելու համար:

Հանգամանքի շեշտադրում

Մենք ուշադրություն ենք հրավիրում ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություն 18-ի վրա, որտեղ ներկայացված է նոր տիպի COVID-19 հիվանդության տարածման ազդեցությունը: Սույն ֆինանսական հաշվետվությունները չեն ներառում վերը նշվածի հնարավոր ազդեցությունը: Մեր կարծիքը չի ձևափոխվել այս հանգամանքի առնչությամբ:

Ղեկավարության և կառավարման օղակներում ներգրավված անձանց պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Ղեկավարությունը պատասխանատու է ՖՀՄՍ-ների համաձայն ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման և այնպիսի ներքին վերահսկողության համար, որը, ըստ ղեկավարության, անհրաժեշտ է խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստումն ապահովելու համար:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս ղեկավարությունը պատասխանատու է Հիմնադրամի՝ անընդհատ գործելու հնարավորությունը գնահատելու համար, համապատասխան դեպքերում անընդհատության հետ կապված հարցերը բացահայտելու և Հիմնադրամի գործունեության անընդհատության ենթադրության հիման վրա հաշվետվությունները պատրաստելու համար, բացառությամբ այն դեպքերի, երբ ղեկավարությունը մտադիր է լուծարել Հիմնադրամը, ընդհատել դրա գործունեությունը կամ, երբ չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլընտրանք:

Կառավարման օղակներում ներգրավված անձիք պատասխանատու են Հիմնադրամի ֆինանսական հաշվետվությունների կազմման գործընթացը վերահսկելու համար:

Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով զերծ են էական խեղաթյուրումներից՝ անկախ դրանց՝ խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորի եզրակացություն: Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ ԱՄՍ-ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ խարդախության կամ սխալի արդյունքում և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք առանձին կամ միասին վերցրած կազդեն ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների՝ այդ ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

ԱՄՍ-ների համաձայն իրականացրած աուդիտի ողջ ընթացքում մենք կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում ենք մասնագիտական կասկածամտություն: Բացի այդ, մենք.

- Հատկորոշում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար ու համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության հետևանքով առաջացած էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին վերահսկողության համակարգի չարաշահում:
- Ձեռք ենք բերում աուդիտին վերաբերող ներքին վերահսկողության մասին պատկերացում՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու և ոչ թե Հիմնադրամի ներքին վերահսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար:

- Գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և կից բացահայտումների խելամտությունը:
- Եզրահանգումներ ենք կատարում ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ և, հիմնվելով ձեռքբերված աուդիտորական ապացույցների վրա, գնահատում ենք՝ արդյոք առկա է դեպքերի կամ հանգամանքների հետ կապված էական անորոշություն, որը կարող է նշանակալի կասկած հարուցել Հիմնադրամի անընդհատ գործելու կարողության վերաբերյալ: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, ապա մեզանից պահանջվում է աուդիտորի եզրակացությունում ուշադրություն հրավիրել ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, եթե այդպիսի բացահայտումները բավարար չեն, ձևափոխել մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր եզրակացության ամսաթիվը ձեռքբերված աուդիտորական ապացույցների վրա: Սակայն ապագա դեպքերը կամ իրավիճակները կարող են ստիպել Հիմնադրամին դադարեցնել անընդհատության հիմունքի կիրառումը:
- Գնահատում ենք ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը՝ ներառյալ բացահայտումները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած գործարքների ու դեպքերի ճշմարիտ ներկայացումը:

Այլ հարցերի հետ մեկտեղ մենք տեղեկացնում ենք կառավարման օղակներում ներգրավված անձանց աուդիտի առաջադրանքի պլանավորված շրջանակների և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի մասին՝ ներառյալ ներքին վերահսկողությանը վերաբերող նշանակալի թերությունները:

Արմեն Հովհաննիսյան	Էմիլ Վասիլյան
Տնօրեն	Առաջադրանքի պատասխանատու

30 սեպտեմբերի 2020թ.

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն

Հազար դրամ	Ծանոթ.	2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ակտիվներ			
Ոչ ընթացիկ ակտիվներ			
Հիմնական միջոցներ	4	31,633	14,013
Ոչ նյութական ակտիվներ	5	10,336	10,858
		41,969	24,871
Ընթացիկ ակտիվներ			
Պաշարներ		740	-
Դեբիտորական պարտքեր	6	15,683	47,120
Մնացորդներ դրամարկղում և բանկերում	7	15,464	24,585
		31,887	71,705
Ընդամենը ակտիվներ		73,856	96,576
Պարտավորություններ			
Ոչ ընթացիկ պարտավորություններ			
Ակտիվներին վերաբերող շնորհներ	8	34,798	15,729
		34,798	15,729
Ընթացիկ պարտավորություններ			
Կրեդիտորական պարտքեր	9	34,978	48,154
Եկամտին վերաբերող շնորհներ	10	4,080	32,693
		39,058	80,847
Զուտ ակտիվներ			
Կուտակված արդյունք		-	-
		-	-
Ընդամենը պարտավորություններ և զուտ ակտիվներ		73,856	96,576

Էդգար Զաքոյան Մարիյա Ամիրյան

Տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Գլխավոր հաշվապահի պաշտոնակատար

Ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են 2020թ. սեպտեմբերի 30-ին:

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 11-ից մինչև 28-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվություն

Հազար դրամ	Ծանոթ.	2019թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2018թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Իրացումից հասույթ	11	275,234	303,556
Իրացման ինքնարժեք	12	(177,306)	(167,705)
Համախառն շահույթ		97,928	135,851
Շնորհներից եկամուտ	13	275,966	238,544
Նվիրատվություններից եկամուտ		3,795	5,420
Այլ եկամուտ		1,911	3,134
Ծրագրային ծախսեր	14	(226,675)	(225,814)
Իրացման ծախսեր	15	(95,581)	(103,868)
Վարչական և ընդհանուր ծախսեր	16	(58,265)	(33,803)
Այլ ֆինանսական արդյունքներ	17	2,489	(10,545)
		1,568	8,919
Շահութահարկի գծով ծախս		(1,568)	(8,919)
Տարվա արդյունք		-	-

Համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 11-ից մինչև 28-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Զուտ ակտիվներում փոփոխությունների մասին հաշվետվություն

Հազար դրամ	Կուտակված արդյունք	Ընդամենը
2018թ. հունվարի 1-ի դրությամբ	-	-
Տարվա արդյունք	-	-
2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	-	-
Տարվա արդյունք	-	-
2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	-	-

Զուտ ակտիվներում փոփոխությունների մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 11-ից մինչև 28-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն

Հազար դրամ	2019թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2018թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Տարվա արդյունք	-	-
Ճշգրտումներ՝		
Մաշվածություն և ամորտիզացիա	9,276	6,892
Ակտիվներին վերաբերող շնորհներից եկամուտ	(7,990)	(7,403)
Շահութահարկի գծով ծախս	1,568	8,919
Փոխարժեքային տարբերությունից (օգուտ)/վնաս	(2,489)	10,545
Գործառնական արդյունք նախքան շրջանառու կապիտալի փոփոխությունները	365	18,953
Փոփոխություններ հետևյալ հոդվածներում՝		
Պաշարներ	(740)	-
Դեբիտորական պարտքեր	34,511	33,221
Կրեդիտորական պարտքեր	(12,921)	16,530
Եկամտին վերաբերող շնորհներ	(28,613)	(37,711)
Գործառնական գործունեությունից ստացված/(գործունեության համար օգտագործված) դրամական միջոցներ	(7,398)	30,993
Վճարված շահութահարկ	(1,568)	(4,249)
Գործառնական գործունեությունից ստացված/(գործունեության համար օգտագործված) զուտ դրամական միջոցներ	(8,966)	26,744
Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների ձեռքբերում	(26,374)	(13,441)
Հիմնական միջոցների օտարումից մուտքեր	-	1,822
Ստացված շնորհներ	27,059	11,058
Ներդրումային գործունեությունից ստացված/(գործունեության համար օգտագործված) զուտ դրամական միջոցներ	685	(561)

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն (շարունակություն)

Հազար դրամ	2019թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2018թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Դրամարկղում և բանկերում մնացորդների զուտ աճ/(նվազում)	(8,281)	26,183
Արտարժույթի փոխարժեքի ազդեցությունը դրամական միջոցների վրա	(840)	(11,592)
Դրամարկղում և բանկերում մնացորդներ տարվա սկզբում	24,585	9,994
Դրամարկղում և բանկերում մնացորդներ տարվա վերջում	15,464	24,585

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 11-ից մինչև 28-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

1 Գործառնությունների բնույթը և ընդհանուր տեղեկատվություն

«Սքոլաե Մունդի Արմենիա» Բարեգործական Հիմնադրամը շահույթ չհետապնդող հիմնադրամ է՝ ստեղծված կամավոր դրամական և բնաիրային ներդրումների հիման վրա և առանց անդամակցության:

Հիմնադրամը ստեղծվել է հիմնադիրների՝ 2015թ. օգոստոսի 18-ի որոշումով: Հիմնադրամի հիմնադիրներն են՝ Ռուբեն Վարդանյանը և Վերոնիկա Զոնաբենդը:

Հիմնադրամի նպատակներն են՝

- Հանրօգուտ նպատակներով խթանել կրթությունը (ներառյալ սոցիալական և ֆիզիկական պատրաստվածության դաստիարակությունը) Դիլիջանի միջազգային դպրոցի ուսանողների շրջանում, Միացյալ Համաշխարհային Քոլեջների շարժման (UWC շարժում) քոլեջներում ու դպրոցներում կամ նմանատիպ այլ կրթական հաստատություններում, որոնք հոգաբարձուների խորհուրդը կարող է ընտրել;
- Աջակցել ու խրախուսել ակտիվ երիտասարդների զարգացմանը (13-30 տարեկան) Դիլիջանում, ստեղծելով ապահով միջավայր իրենց սեփական նախագծերը նախաձեռնելու և իրականացնելու, ինչպես նաև իրենց հետաքրքրությունները համագործակցության, փոխգործակցության միջոցով զարգացնելու համար, ինչպես նաև տեղական բնակչության, մասնավորապես, երիտասարդների ու Դիլիջանի միջազգային դպրոցի ուսանողների միջև բարեկամական ու ստեղծագործ հարաբերություններ կառուցելու համար;
- Հիմնադրամի գործառույթների իրականացման նպատակով տրամադրել դրամական և բնաիրային աջակցություն ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձանց (այդ թվում՝ աշխատակիցներին) ներառյալ՝ տեղավորման, բնակարանային պայմանների ապահովման, ճանապարհածախսի, սննդի, ապահովագրության և ցանկացած այլ կարիքների համար վճարումները և/կամ փոխհատուցումն ապահովելու նպատակով;
- Խթանել բարեգործական, մշակութային, կրթական և այլ նպատակների իրականացումը, որոնք բխում են վերը շարադրված նպատակներից և համապատասխանում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը:

Հիմնադրամի շահառուներն են՝ Դիլիջանի քաղաքային համայնքի երեխաները, երիտասարդները և ուսանողները, Դիլիջանի միջազգային դպրոցի և UWC շարժման դպրոցների և քոլեջների դիմորդները, ինչպես նաև անձնակազմը, որը ուսումնական գործընթացի կազմակերպչական աշխատանքներին է մասնակցում Դիլիջանի միջազգային դպրոցում և UWC շարժման դպրոցներում և քոլեջներում:

Հիմնադրամն իրականացնում է նաև որոշակի տեսակների ձեռնարկատիրական գործունեություն:

Հիմնադրամի գրանցման հասցեն է՝ Մելիք-Ադամյան փողոց 2/2, ք. Երևան 0010, Հայաստան:

Հիմնադրամի աշխատակիցների միջին թվաքանակը 2019թ. կազմել է 22 մարդ (2018թ.՝ 13 մարդ):

2 Պատրաստման հիմքերը

2.1 Համապատասխանություն

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ) համաձայն, ինչպես հրապարակվել է Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի (ՀՀՄՍԽ) կողմից:

Ներկայումս ՖՀՄՍ չեն պարունակում հաշվապահական հաշվառման վարման և ֆինանսական հաշվետվությունների ներկայացման վերաբերյալ հատուկ ուղեցույցներ՝ շահույթ չհետապնդող և ոչ կառավարական կազմակերպությունների համար: Եթե ՖՀՄՍ չի տալիս ուղղություն շահույթ չհետապնդող ոլորտի կազմակերպություններին հատուկ գործարքների հաշվառման վերաբերյալ, ապա հաշվապահական հաշվառման քաղաքականությունը պետք է հիմնվի ՖՀՄՍ ընդհանուր սկզբունքների վրա՝ համաձայն Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի (ՀՀՄՍԽ) *«Ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ներկայացման հայեցակարգային հիմունքների»*:

2.2 Չափման հիմքեր

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են սկզբնական արժեքի սկզբունքով:

2.3 Գործառնական և ներկայացման արժույթ

Հայաստանի Հանրապետության ազգային արժույթը հայկական դրամն է (դրամ), որն էլ հանդիսանում է Հիմնադրամի գործառնական արժույթը, քանի որ այն լավագույնս արտացոլում է ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած իրադարձությունների և Հիմնադրամի գործարքների տնտեսական բովանդակությունը:

Սույն ֆինանսական հաշվետվությունները ներկայացված են հայկական դրամով, քանի որ, ղեկավարության համոզմամբ, այս արժույթն առավել օգտակար է Հիմնադրամի ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների համար: Դրամով ներկայացված ամբողջ ֆինանսական տեղեկատվությունը կլորացված է մինչև մոտակա հազար միավորը:

2.4 Գնահատումների և դատողությունների կիրառում

ՖՀՄՍ-ին համապատասխան ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը պահանջում է, որպեսզի Հիմնադրամի ղեկավարությունը կարևոր գնահատումներ և ենթադրություններ կատարի, որոնք ազդեցություն են գործում ֆինանսական հաշվետվությունների ամսաթվի դրությամբ ակտիվների և պարտավորությունների գումարների, ինչպես նաև հաշվետու տարվա եկամուտների և ծախսերի գումարների վրա: Չնայած ենթադրությունները և դատողությունները շարունակաբար գնահատվում են և հիմնված են ղեկավարության կողմից ներկա ցուցանիշների վերաբերյալ տեղեկացված լինելու վրա, այդ հաշվապահական գնահատականները, որպես կանոն, հազվադեպ են համապատասխանում իրական արդյունքներին: Հետևաբար, կատարված ենթադրությունները և դատողությունները համապատասխանաբար կճշգրտվեն այն տարում, որում պայմանները կփոխվեն:

2.5 Նոր և վերանայված ստանդարտների ընդունում

Ընթացիկ տարում Հիմնադրամն ընդունել է իր գործունեության համար կիրառելի և 2019թ. հունվարի 1-ից սկսվող ժամանակաշրջանների համար ուժի մեջ մտած բոլոր նոր և վերանայված ստանդարտները և մեկնաբանությունները, որոնք հրապարակվել են Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի (ՀՀՄՍԽ) և ՀՀՄՍԽ-ի Մեկնաբանման կոմիտեի (ՄԿ) կողմից:

Նշված փոփոխությունների բնույթը և ազդեցությունը բացահայտված են ստորև:

Նոր և վերանայված ստանդարտներ և մեկնաբանություններ, որոնք կիրառելի են 2019թ. հունվարի 1-ից և դրանից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար

ՖՀՄՍ 9 (Փոփոխություններ) *«Ֆինանսական գործիքներ. կանխավճարների առանձնահատկությունները՝ բացասական փոխհատուցմամբ»*

ՖՀՄՍ 9-ի համաձայն պարտքային գործիքը կարող է չափվել ամորտիզացված արժեքով կամ իրական արժեքով՝ այլ համապարփակ արդյունքում, պայմանով, որ պայմանագրային դրամական հոսքերը հանդիսանում են «միայն մայր գումարի և չմարված մայր գումարի վրա հաշվարկված տոկոսների վճարումներ» (SPPI չափանիշ) և գործիքը պահվում է այդ դասակարգմանը համապատասխանող բիզնես մոդելի շրջանակներում: ՖՀՄՍ 9-ի փոփոխությունները պարզաբանում են, որ ֆինանսական ակտիվը բավարարում է SPPI չափանիշին՝ անկախ որևէ իրադարձությունից կամ հանգամանքից, որը պատճառ է հանդիսանում պայմանագրի վաղաժամ դադարեցման համար և անկախ նրանից, թե պայմանագրի վաղաժամ դադարեցման պատճառով որ կողմն է վճարում կամ ստանում համապատասխան փոխհատուցում:

Այս փոփոխությունների ազդեցությունը Հիմնադրամի ֆինանսական հաշվետվությունների վրա էական չէ:

Ստանդարտներ, փոփոխություններ և մեկնաբանություններ գործող ստանդարտների վերաբերյալ, որոնք դեռևս չեն գործում և նախօրոք չեն ներդրվել Հիմնադրամի կողմից

Այս ֆինանսական հաշվետվությունների հաստատման ամսաթվի դրությամբ Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի (ՀՀՄՍԽ) կողմից թողարկվել են որոշակի նոր ստանդարտներ, փոփոխություններ և մեկնաբանություններ գործող ստանդարտների վերաբերյալ, որոնք սակայն դեռևս չեն գործում և նախօրոք չեն ներդրվել Հիմնադրամի կողմից:

Ղեկավարությունը կանխատեսում է, որ բոլոր կիրառելի հրապարակումները կներդրվեն Հիմնադրամի հաշվապահական հաշվառման քաղաքականությունում սկսած հրապարակման ուժի մեջ մտնելու ամսաթվին հաջորդող առաջին իսկ ժամանակաշրջանից: Ընթացիկ տարում չկիրառված նոր ստանդարտները, փոփոխությունները և մեկնաբանությունները չեն բացահայտվել, քանի որ չի ակնկալվում, որ դրանք էական ազդեցություն կունենան Հիմնադրամի ֆինանսական հաշվետվությունների վրա:

3 Հաշվապահական հաշվառման քաղաքականություն

3.1 Արտարժույթ

Արտարժույթով գործարքներ

Ֆինանսական հաշվետվություններ պատրաստելիս Հիմնադրամի համար գործառնական արժույթից տարբեր այլ արժույթով իրականացված գործարքները գրանցվում են գործարքի օրվա դրությամբ Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի (ՀՀ ԿԲ) կողմից հրապարակված փոխարժեքով: Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ արտարժույթով դրամային հոդվածները վերահաշվարկվում են՝ կիրառելով հաշվետու ամսաթվի դրությամբ ՀՀ ԿԲ-ի կողմից հրապարակված փոխարժեքը. 2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ 1 ԱՄՆ դոլարը կազմում էր 479.70 ՀՀ դրամ, 1 եվրոն՝ 537.26 ՀՀ դրամ (2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ 1 ԱՄՆ դոլարը կազմում էր 483.75 ՀՀ դրամ, 1 եվրոն՝ 553.65 ՀՀ դրամ): Ոչ դրամային հոդվածները չեն վերահաշվարկվում և չափվում են պատմական արժեքով:

Արտարժույթով գործարքներից, ինչպես նաև արտարժույթով արտահայտված դրամային հոդվածների վերահաշվարկումից առաջացած փոխարժեքային տարբերությունները ճանաչվում են ժամանակաշրջանի արդյունքում:

3.2 Հիմնական միջոցներ

Հիմնական միջոցները հաշվառվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կորուստները: Սկզբնական արժեքը ներառում է ձեռքբերման գինը, ներկրման տուրքերը, հարկերը, որոնք ենթակա չեն վերադարձման և ուղղակիորեն վերագրվող ծախսումներ: Երբ հիմնական միջոցների միավորը բաղկացած է տարբեր օգտակար ծառայության ժամկետ ունեցող խոշոր բաղկացուցիչներից, դրանք հաշվառվում են որպես հիմնական միջոցի առանձին միավորներ:

Հիմնական միջոցի օտարման կամ դուրսգրման հետևանքով առաջացած օգուտը կամ վնասը որոշվում է վաճառքից հասույթի և ակտիվի հաշվեկշռային արժեքի տարբերությամբ և ճանաչվում է տարվա արդյունքում:

Հիմնական միջոցի՝ որպես առանձին ակտիվ հաշվառվող միավորի բաղկացուցչի փոխարինման ծախսումները կապիտալացվում են դուրս գրված բաղկացուցչի հաշվեկշռային արժեքի հետ: Այլ հետագա ծախսումները կապիտալացվում են միայն այն ժամանակ, երբ դրանք ավելացնում են հիմնական միջոցի միավորի հետ կապված ապագա տնտեսական օգուտները: Բոլոր այլ ծախսումները, ներառյալ պահպանման և վերանորոգման ծախսումները, ճանաչվում են տարվա արդյունքում՝ կատարվելու ժամանակաշրջանում:

Մաշվածությունը ճանաչվում է տարվա արդյունքում կամ ավելացվում է այլ ակտիվի սկզբնական արժեքին՝ կիրառելով գծային մեթոդը հիմնական միջոցի օգտակար ծառայության գնահատված ժամկետի ընթացքում: Մաշվածության հաշվարկը սկսվում է այն պահից, երբ ակտիվը դառնում է մատչելի՝ իր նպատակային նշանակությամբ օգտագործելու համար: Հիմնական միջոցների գնահատված օգտակար ծառայության ժամկետները ներկայացված են ստորև.

Մեքենաներ և սարքավորումներ	-	3 - 8 տարի,
Տնտեսական գույք, գործիքներ	-	5 տարի,
Համակարգչային տեխնիկա	-	3 տարի:

3.3 Ֆինանսական գործիքներ

Ճանաչում և ապաճանաչում

Ֆինանսական ակտիվները և ֆինանսական պարտավորությունները ճանաչվում են, երբ Հիմնադրամը դառնում է ֆինանսական գործիքի պայմանագրային կողմ:

Ֆինանսական ակտիվներն ապաճանաչվում են, երբ լրանում են ֆինանսական ակտիվից ակնկալվող դրամական հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները, կամ այն ժամանակ, երբ ֆինանսական ակտիվները բոլոր նշանակալից ռիսկերով ու հատուցումներով փոխանցվում են երրորդ կողմին:

Ֆինանսական պարտավորությունները ապաճանաչվում են, երբ դրանք մարվում են, վճարման ենթակա չեն, չեղյալ են ճանաչվել կամ լրացել է դրանց ուժի մեջ լինելու ժամկետը:

Ֆինանսական ակտիվների դասակարգումը և սկզբնական չափումը

Բոլոր ֆինանսական ակտիվները սկզբնապես չափվում են իրական արժեքով՝ գումարած գործարքի հետ կապված ծախսումները, բացառությամբ այն առևտրային դեբիտորական պարտքերի, որոնք չեն պարունակում էական ֆինանսական բաղադրիչ և չափվում են գործարքի գնով՝ ՖՀՄՍ 15-ի պահանջներին համապատասխան:

Ֆինանսական ակտիվները բաժանվում են հետևյալ կատեգորիաների.

- Ամորտիզացված արժեքով հաշվառվող
- իրական արժեքով չափվող՝ շահույթի կամ վնասի միջոցով,
- իրական արժեքով չափվող՝ այլ համապարփակ արդյունքում:

Ներկայացված ժամանակաշրջաններում Հիմնադրամը չունի որպես այլ համապարփակ արդյունքում իրական արժեքով հաշվառվող դասակարգված ֆինանսական ակտիվներ: Հիմնադրամի ֆինանսական ակտիվները ըստ կատեգորիաների ներկայացված են ծանոթագրություն 19-ում:

Կրեդիտորական պարտքեր

Կրեդիտորական պարտքերը ճանաչվում են իրական արժեքով, հետագայում չափվում են ամորտիզացված արժեքով:

Հիմնադրամի ֆինանսական պարտավորությունները ըստ կատեգորիաների ներկայացված են ծանոթագրություն 19-ում:

3.4 Շնորհներ

Շնորհը չի ճանաչվում, քանի դեռ չկա հիմնավորված երաշխիք, որ Հիմնադրամը կատարելու է դրան կից բոլոր պայմանները, և որ շնորհը ստացվելու է:

Շնորհները, որոնց հիմնական պայմանը Հիմնադրամի կողմից ոչ ընթացիկ ակտիվներ գնելը, կառուցելը կամ այլ կերպ ձեռք բերելն է, ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչվում են որպես ակտիվներին վերաբերող շնորհներ և սիստեմատիկորեն փոխանցվում են տարվա արդյունք՝ համապատասխան ակտիվի օգտակար ծառայության ժամկետի ընթացքում:

Այլ շնորհները ճանաչվում են սիստեմատիկ հիմունքով եկամուտ այն ժամանակաշրջանում, որի ընթացքում դրանք փոխհատուցում են համապատասխան ծախսումները, որոնց համար դրանք ստացվել են: Շնորհը, որը հատկացվում է Հիմնադրամին՝ ի հատուցում արդեն կրած ծախսերի կամ վնասների, կամ որպես շտապ ֆինանսական օգնություն՝ առանց հետագա համապատասխան ծախսումներ կրելու, ճանաչվում է որպես եկամուտ այն հաշվետու ժամանակաշրջանում, երբ դառնում է ստացման ենթակա:

Շնորհները, որոնք ստացվել են դոնորների կողմից, սակայն հաշվետու ամսաթվի դրությամբ չեն օգտագործվել ըստ նպատակայնության, ճանաչվում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում որպես եկամտին վերաբերող շնորհ (ընթացիկ պարտավորություն) և սիստեմատիկորեն փոխանցվում են տարվա արդյունք՝ այդ շնորհների օգտագործմանը զուգընթաց:

Այլ շնորհները ճանաչվում են սիստեմատիկ հիմունքով եկամուտ այն ժամանակաշրջանում, որի ընթացքում դրանք փոխհատուցում են համապատասխան ծախսումները, որոնց համար դրանք ստացվել են:

Յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի համար Հիմնադրամն առևտրային գործունեությունից ստացվող զուտ արդյունքը նույն հաշվետու ժամանակաշրջանում օգտագործում է իր բարեգործական նպատակների համար ծախսերը ֆինանսավորելու նպատակով և այդ գումարի չափով քիչ է եկամտագրում եկամուտներին վերաբերող շնորհը:

3.5 Հատուցումներ աշխատակիցներին

Կարճաժամկետ հատուցումներն աշխատակիցներին այն հատուցումներն են, որոնք ենթակա են մարման ամբողջությամբ տարեկան այն հաշվետու ժամանակաշրջանի ավարտից հետո տասներկու ամսվա ընթացքում, որում աշխատակիցները մատուցել են համապատասխան ծառայությունները: Դրանք ներառում են՝

(ա) աշխատավարձերը և պարգևավճարները,

(բ) վճարովի տարեկան արձակուրդները և անաշխատունակության հետ կապված վճարովի արձակուրդները:

Վճարովի բացակայություններ

Վճարովի բացակայությունների ձևով աշխատակիցների կարճաժամկետ հատուցումների գծով ակնկալվող ծախսումները ճանաչվում են հետևյալ կերպ.

(ա) կուտակվող վճարովի բացակայությունների դեպքում՝ այն ժամանակ, երբ աշխատակիցները ծառայություն են մատուցում, որն ավելացնում է իրենց իրավունքները ապագա վճարովի բացակայությունների նկատմամբ,

(բ) չկուտակվող վճարովի բացակայությունների դեպքում՝ այն ժամանակ, երբ բացակայությունը տեղի է ունենում:

Պարգևավճարներ

Պարգևավճարների գծով ակնկալվող ծախսումները ճանաչվում են միայն այն ժամանակ, երբ Հիմնադրամն ունի այդպիսի վճարումներ կատարելու ներկա իրավական կամ կառուցողական պարտականություն՝ որպես անցյալ դեպքերի արդյունք, և պարտականությունը հնարավոր է արժանահավատորեն գնահատել:

Ներկա պարտականություն գոյություն ունի այն և միայն այն դեպքում, երբ Հիմնադրամը վճարում չկատարելու ոչ մի իրատեսական այլընտրանք չունի:

3.6 Եկամտի ճանաչում

Հասույթը չափվում է ստացված կամ ստացվելիք հատուցման իրական արժեքով՝ հաշվի առնելով Հիմնադրամի կողմից տրամադրված ցանկացած առևտրական զեղչերը և իջեցումների գումարները:

Ծառայությունների մատուցում

Ծառայությունների մատուցումից ստացված հասույթը ճանաչվում է, երբ՝

- հնարավոր է արժանահավատորեն չափել հասույթի գումարը,
- հավանական է, որ գործարքի հետ կապված տնտեսական օգուտները կհոսեն Հիմնադրամ,
- հնարավոր է արժանահավատորեն չափել հաշվետու ամսաթվի դրությամբ գործարքի ավարտվածության աստիճանը,
- հնարավոր է արժանահավատորեն չափել գործարքի համար կատարված և գործարքն ավարտելու համար անհրաժեշտ ծախսումները:

Շնորհներից եկամուտ

Այս եկամտի ճանաչման քաղաքականությունը ներկայացված է ծանոթագրություն 3.4-ում:

4 Հիմնական միջոցներ

Հազար դրամ	Մեքենաներ և սարքավորումներ	Տնտեսական գույք, գործիքներ	Համակարգչային տեխնիկա	Ընդամենը
Սկզբնական արժեք				
2018թ. հունվարի 1-ի դրությամբ	1,412	6,152	6,864	14,428
Ավելացում	3,820	3,591	2,808	10,219
Օտարում	-	(2,925)	-	(2,925)
2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	5,232	6,818	9,672	21,722
Ավելացում	4,065	12,018	8,495	24,578
2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	9,297	18,836	18,167	46,300
Կուտակված մաշվածություն				
2018թ. հունվարի 1-ի դրությամբ	869	2,309	875	4,053
Տարվա հաշվարկ	747	1,399	2,613	4,759
Օտարման հետևանքով դուրսգրում	-	(1,103)	-	(1,103)
2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	1,616	2,605	3,488	7,709
Տարվա հաշվարկ	1,027	1,487	4,444	6,958
2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2,643	4,092	7,932	14,667
Հաշվեկշռային արժեք				
2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	3,616	4,213	6,184	14,013
2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	6,654	14,744	10,235	31,633

2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Հիմնադրամը գրավադրված հիմնական միջոցներ չունի:

2019թ. ավելացումներում ներառված են՝ Հիմնադրամի հետ կապակցված կողմեր հանդիսացող «Հայաստանի Զարգացման Նախաձեռնություններ» բարեգործական հիմնադրամի կողմից անհատույց ստացված հիմնական միջոցները՝ 7,481 հազար դրամ և «ԴԻՍ Փրոփերթիս» բարեգործական հիմնադրամի կողմից անհատույց ստացված հիմնական միջոցները ՝ 13,995 հազար դրամ, այլ միջոցներով ձեռք բերված հիմնական միջոցներ՝ 3,102 հազար դրամ (2018թ.՝ համակարգչային տեխնիկա՝ 2,808 հազար դրամ, կավի չորացման վառարան՝ 1,450 հազար դրամ, այլ սարքավորումներ՝ 2,370 հազար դրամ, տնտեսական գույք՝ 2,415 հազար դրամ, կահույք՝ 1,176 հազար դրամ):

2019թ. մաշվածության գծով ծախսը բաշխվել է ծրագրային ծախսերին՝ 6,239 հազար դրամ, իրացման ծախսերին՝ 360 հազար դրամ, վարչական և ընդհանուր ծախսերին՝ 359 հազար դրամ (2018թ.՝ ծրագրային ծախսերին՝ 4,292 հազար դրամ, իրացման ծախսերին՝ 316 հազար դրամ, վարչական և ընդհանուր ծախսերին՝ 151 հազար դրամ):

5 Ոչ նյութական ակտիվներ

Հազար դրամ	Համակարգչային ծրագրի լիցենզիաներ	Վեբ կայքեր	Ընդամենը
Սկզբնական արժեք			
2018թ. հունվարի 1-ի դրությամբ	885	10,182	11,067
Ավելացում	1,195	2,027	3,222
2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2,080	12,209	14,289
Ավելացում	1,796	-	1,796
2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	3,876	12,209	16,085
Կուտակված ամորտիզացիա			
2018թ. հունվարի 1-ի դրությամբ	18	1,280	1,298
Տարվա հաշվարկ	944	1,189	2,133
2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	962	2,469	3,431
Տարվա հաշվարկ	1,097	1,221	2,318
2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2,059	3,690	5,749
Հաշվեկշռային արժեք			
2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	1,118	9,740	10,858
2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	1,817	8,519	10,336

2019թ. ամորտիզացիայի գծով ծախսը բաշխվել է ծրագրային ծախսերին՝ 1,061 հազար դրամ, իրացման ծախսերին՝ 1,038 հազար դրամ, վարչական և ընդհանուր ծախսերին՝ 219 հազար դրամ (2018թ.՝ ծրագրային ծախսերին՝ 935 հազար դրամ, իրացման ծախսերին՝ 995 հազար դրամ, վարչական և ընդհանուր ծախսերին՝ 203 հազար դրամ):

6 Դեբիտորական պարտքեր

Հազար դրամ	2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Դեբիտորական պարտքեր	7,041	36,340
	7,041	36,340
Կասկածելի դեբիտորական պարտքերի գծով պահուստ	(1,712)	(1,075)
Զուտ առևտրային դեբիտորական պարտքեր	5,329	35,265
Տրված կանխավճարներ	996	1,074
Պետական բյուջեից դեբիտորական պարտքեր	9,358	10,781
	15,683	47,120

2019թ. տրված կանխավճարները ներկայացնում են գումարներ տրված «ՍԻԼ ինշուրանս» ԱՓԲԸ-ին՝ 908 հազար դրամ, այլ մատակարարներին՝ 88 հազար դրամ (2018թ.՝ ՍԻԼ

ինշուրանս» ԱՓԲԸ-ին՝ 608 հազար դրամ, «Դիլիջանի ավագ դպրոց» ՊՈԱԿ-ին՝ 466 հազար դրամ):

Բոլոր գումարները կարճաժամկետ են: Դեբիտորական պարտքերի զուտ հաշվեկշռային արժեքը համարվում է իրական արժեքի խելամիտ գնահատում: Ղեկավարությունը հավատացած է, որ պետական բյուջեից դեբիտորական պարտքերն ամբողջովին ենթակա են վերականգնման:

2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ 1,712 հազար դրամ (2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 1,075 հազար դրամ) ընդհանուր հաշվեկշռային արժեք ունեցող առանձին առևտրային դեբիտորական պարտքերն արժեզրկվել են, և դրանց գծով ստեղծվել է պահուստ: Պահուստի գումարը կազմում է 1,712 հազար դրամ (2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 1,075 հազար դրամ): Առանձին արժեզրկված առևտրային դեբիտորական պարտքերը հիմնականում վերաբերում են Հիմնադրամի կողմից կազմակերպվող ամառային ճամբարի մասնակիցների վճարների գծով ստացվելիք գումարները:

7 Մնացորդներ դրամարկղում և բանկերում

Հազար դրամ	2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Կանխիկ միջոցներ	81	81
Բանկային հաշիվներ	15,383	24,504
	15,464	24,585

Տե՛ս ծանոթագրություն 20՝ բանկում մնացորդների արժույթների բացահայտման համար:

8 Ակտիվներին վերաբերող շնորհներ

Հազար դրամ	2019թ.	2018թ.
Տարեսկզբի մնացորդ	15,729	12,074
Ավելացում (տես՝ ծանոթ. 4)	21,476	-
Վերադասակարգում եկամտին վերաբերող շնորհներից (տես՝ ծանոթ. 10)	5,583	11,058
Տարվա ընթացքում օգտագործում (տես՝ ծանոթ. 13)	(7,990)	(7,403)
Տարեվերջի մնացորդ	34,798	15,729

9 Կրեդիտորական պարտքեր

Հազար դրամ	2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Առևտրային կրեդիտորական պարտքեր	24,997	42,652
Հատուցումներ աշխատակիցներին	9,971	5,418
Կրեդիտորական պարտքեր պետական բյուջեի գծով	-	84
Այլ	10	-
	34,978	48,154

Կրեդիտորական պարտքերի գծով տոկոսներ չեն հաշվարկվում: Հիմնադրամն ունի ֆինանսական ռիսկի կառավարման քաղաքականություններ, որոնք ապահովում են բոլոր պարտավորությունների ժամանակին կատարում:

10 Եկամտին վերաբերող շնորհներ

Հազար դրամ	2019թ.	2018թ.
Տարեսկզբի մնացորդ	32,693	70,404
Ավելացում	244,946	205,627
Վերադասակարգում ակտիվներին վերաբերող շնորհներին (տես՝ ծանոթ. 8)	(5,583)	(11,058)
Տարվա ընթացքում օգտագործում (տես՝ ծանոթ. 13)	(267,976)	(231,141)
Շնորհի դուրսգրում	-	(1,139)
Տարեվերջի մնացորդ	4,080	32,693

Եկամտին վերաբերող շնորհներում ավելացումները ներկայացնում են հետևյալ դոնորներից ստացված դրամական միջոցները՝

Հազար դրամ	2019թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2018թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
«Աջակցություն զարգացման նախաձեռնություններին» բարեգործական հիմնադրամ	89,642	-
Պրն Ռուբեն Վարդանյան	56,844	-
Թի Դի Ադվայզորս Էլ Թի Դի	44,417	133,280
«Շկոլի Միրա» հիմնադրամ	40,603	46,930
«Հայաստանի զարգացման նախաձեռնություններ» բարեգործական հիմնադրամ	11,894	-
Տկն Նազենի Ղարիբյան	875	-
«Յունիվերսիթի օֆ Դելըվեր», ԱՄՆ	471	1,189
«Լեգելատա» ՓԲԸ	200	-
«Քարնեգի Քորփորեյշն օֆ Նյու Յորք», ԱՄՆ	-	24,228
	244,946	205,627

Եկամտին վերաբերող շնորհների տարեվերջի մնացորդները ներկայացնում են հետևյալ դոնորներից ստացված միջոցների չօգտագործված մնացորդները՝

Հազար դրամ	2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
«Աջակցություն զարգացման նախաձեռնություններին» բարեգործական հիմնադրամ	3,609	-
«Յունիվերսիթի օֆ Դելըվեր», ԱՄՆ	471	-
Թի Դի Ադվայզորս Էլ Թի Դի	-	32,693
	4,080	32,693

11 Իրացումից հասույթ

Հազար դրամ	2019թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2018թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Ամառային ճամբարի կազմակերպումից հասույթ	275,191	303,556
Ապրանքների վաճառքից հասույթ	43	-
	275,234	303,556

12 Իրացման ինքնարժեք

Հազար դրամ	2019թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2018թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Ամառային ճամբարի կազմակերպման ինքնարժեք	177,306	167,705
	177,306	167,705

13 Շնորհներից եկամուտ

Հազար դրամ	2019թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2018թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Եկամտին վերաբերող շնորհներից եկամուտ (տես՝ ծանոթ. 10)	267,976	231,141
Ակտիվներին վերաբերող շնորհներից եկամուտ (տես՝ ծանոթ. 8)	7,990	7,403
	275,966	238,544

14 Ծրագրային ծախսեր

Հազար դրամ	2019թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2018թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Փոխհատուցումներ աշխատակիցներին, ապահովագրություն	99,094	111,265
Այլ նվիրատվություններ և նվիրաբերություններ	48,045	19,430
Կրթաթոշակներ	37,065	42,403
Տրանսպորտային ծախսեր	12,165	6,037
Մաշվածություն և ամորտիզացիա	7,300	5,227
Վարձակալություն, նորոգում և սպասարկում	5,869	5,062
Խորհրդատվական ծախսեր	3,257	-
Կապի, փոստային և գրասենյակային ծախսեր	2,272	3,117
Գործուղման և ներկայացուցչական ծախսեր	1,104	22,405
Մարկետինգի և գովազդի ծախսեր	903	664
Նյութական ծախսեր, վարձույթ և սպասարկում	773	8,992
Այլ ծախսեր	8,828	1,212
	226,675	225,814

15 Իրացման ծախսեր

Հազար դրամ	2019թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2018թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Խորհրդատվական ծախսեր	54,229	64,459
Մարկետինգի և գովազդի ծախսեր	15,453	15,146
Փոխհատուցումներ աշխատակիցներին, ապահովագրություն	12,239	8,020
Տրանսպորտային ծախսեր	1,907	1,861
Գործուղման և ներկայացուցչական ծախսեր	1,424	6,567
Մաշվածություն և ամորտիզացիա	1,399	1,311
Այլ ծախսեր	8,930	6,504
	95,581	103,868

16 Վարչական և ընդհանուր ծախսեր

Հազար դրամ	2019թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2018թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Փոխհատուցումներ աշխատակիցներին, ապահովագրություն	25,575	15,645
Վարձակալություն	15,697	-
Աուդիտի և խորհրդատվական ծախսեր	7,441	7,692
Մաշվածություն և ամորտիզացիա	577	354
Կապի, փոստային և գրասենյակային ծախսեր	188	47
Գործուղման և ներկայացուցչական ծախսեր	31	208
Այլ ծախսեր	8,756	9,857
	58,265	33,803

17 Այլ ֆինանսական արդյունքներ

Հազար դրամ	2019թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2018թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Փոխարժեքային տարբերությունից օգուտ/(վնաս)՝		
Դեբիտորական պարտքեր	3,074	(7,353)
Մնացորդներ դրամարկղում և բանկերում	(840)	(11,592)
Կրեդիտորական պարտքեր	255	8,400
	2,489	(10,545)

18 Հետհաշվեկշռային իրադարձություններ

2020թ. մարտ ամսին Առողջապահության համաշխարհային կազմակերպությունը 2019թ. դեկտեմբեր ամսին Չինաստանում բռնկված կորոնավիրուսը (COVID-19) դասակարգեց որպես համաճարակ: Այս նոր տիպի կորոնավիրուսի բռնկումը առաջացրել է արտասահմանում գործող կամ արտերկրյա ընկերությունների հետ սերտ առևտրային կապեր ունեցող ընկերությունների գործունեության էական խեղաթյուրումներ: Կորոնավիրուսային բռնկման հետ կապված գլոբալ արձագանքը շարունակում են արագորեն ընդլայնվել: COVID-19-ն արդեն իսկ էական ազդեցություն է ունեցել համաշխարհային տնտեսության և խոշոր ֆինանսական շուկաների վրա:

2020թ. մարտի 16-ին Հայաստանի Հանրապետության կառավարությունը հայտարարել է երկրում արտակարգ իրավիճակ մինչև 2020թ. ապրիլի 14-ը, որն այնուհետև երկարաձգվել էր մինչև 2020թ. սեպտեմբերի 14-ը:

Հիմնադրամի գործունեության վրա նշանակալի ազդեցությունը կարող է արտահայտվել աշխատակազմի հասանելիության սահմանափակման, ծառայությունների մատուցման ծավալների, եկամուտների նվազեցման և այլ երևույթների տեսքով:

Հիմնադրամի ղեկավարությունը գնահատում է, որ վերը նկարագրվածը չի ունենա էական ազդեցություն ֆինանսական հաշվետվությունների վրա:

19 Ֆինանսական գործիքներ

19.1 Հաշվապահական հաշվառման քաղաքականություններ

Ֆինանսական ակտիվի, ֆինանսական պարտավորության և բաժնային գործիքի յուրաքանչյուր դասի համար կիրառված հաշվապահական հաշվառման քաղաքականությունը և ընդունված մեթոդների մանրամասները, ինչպես նաև եկամտի և ծախսերի ճանաչման չափանիշներն ու հիմքերը ներկայացված են ծանոթագրություն 3-ում:

19.2 Ֆինանսական գործիքների կատեգորիաները

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ներկայացված մնացորդները վերաբերում են ակտիվների և պարտավորությունների հետևյալ կատեգորիաներին.

Ֆինանսական ակտիվներ

Հազար դրամ	2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ		
Դեբիտորական պարտքեր	5,329	35,265
Մնացորդներ դրամարկղում և բանկերում	15,464	24,585
	20,793	59,850

Ֆինանսական պարտավորություններ

Հազար դրամ	2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ամորտիզացված արժեքով պահվող ֆինանսական պարտավորություններ		
Կրեդիտորական պարտքեր	34,968	48,070
	34,968	48,070

20 Ֆինանսական ռիսկի կառավարման ուղղություններ

Ֆինանսական գործիքների հետ կապված՝ Հիմնադրամը ենթարկվում է զանազան ռիսկերի: Այս ռիսկերն են շուկայական ռիսկը, պարտքային ռիսկը և իրացվելիության ռիսկը:

Հիմնադրամը ներգրավված չէ սպեկուլյատիվ նպատակներով ֆինանսական ակտիվների ակտիվ առքուվաճառքի գործարքներում, ինչպես նաև չի թողարկում օպցիոններ: Առավել էական ֆինանսական ռիսկերը, որոնց Հիմնադրամը կարող է ենթարկվել, նկարագրված են ստորև:

Ֆինանսական ռիսկի գործոններ

ա) Շուկայական ռիսկ

Արտարժութային ռիսկ

Արտարժույթով արտահայտված ֆինանսական ակտիվներն ու պարտավորությունները, որոնք Հիմնադրամին ենթարկում են արտարժութային ռիսկի, նկարագրված են ստորև: Արտացոլված գումարներն իրենցից ներկայացնում են հիմնական ղեկավար անձնակազմին տրամադրված տվյալները, որոնք արտահայտված են հայկական դրամով՝ հաշվետու ժամանակաշրջանի վերջի ամսաթվի փոխարժեքով.

Հոդված

2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	ԱՄՆ դոլար	Եվրո	Այլ
Ֆինանսական ակտիվներ			
Դեբիտորական պարտքեր	-	-	5,155
Մնացորդներ բանկերում	13,460	323	192
	13,460	323	5,347
Ֆինանսական պարտավորություններ			
Կրեդիտորական պարտքեր	465	-	15,766
	465	-	15,766
Զուտ արդյունք	12,995	323	(10,419)

Հոդված

2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	ԱՄՆ դոլար	Եվրո	ՌԴ ռուբլի
Ֆինանսական ակտիվներ			
Դեբիտորական պարտքեր	-	1,129	34,344
Մնացորդներ բանկերում	15,907	513	1,704
	15,907	1,642	36,048
Ֆինանսական պարտավորություններ			
Կրեդիտորական պարտքեր	131	11	40,257
	131	11	40,257
Զուտ արդյունք	15,776	1,631	(4,209)

Ստորև բերված աղյուսակում ներկայացված է Հիմնադրամի զգայունությունը՝ ԱՄՆ դոլարի, եվրոյի և ռուբլու նկատմամբ դրամի 10% (2018թ.՝ 10%) աճին/նվազմանը: 10%-ը (2018թ.՝ 10%) ղեկավարության կողմից գնահատված փոխարժեքի հավանական փոփոխությունն է: Զգայունության վերլուծությունը ներառում է միայն արտարժույթով արտահայտված դրամային հոդվածների մնացորդները և ժամանակաշրջանի վերջում ճշգրտում է դրանց փոխարկումը՝ փոփոխելով փոխարժեքը 10%-ով (2018թ.՝ 10%):

Դրամի արժևորումը ԱՄՆ դոլարի, եվրոյի և ՌԴ ռուբլու նկատմամբ 10%-ով (2018թ.՝ 10%) կունենա հետևյալ ազդեցությունը:

	ԱՄՆ դոլարի ազդեցություն		Եվրոյի ազդեցություն		ՌԴ ռուբլու ազդեցություն	
	2019թ.	2018թ.	2019թ.	2018թ.	2019թ.	2018թ.
Տարվա արդյունք	1,299	1,578	-	163	(1,042)	(421)

Արտարժույթի փոխարժեքի տատանման ազդեցությունը տարվա ընթացքում փոփոխվում է՝ կախված արտերկրյա գործարքների ծավալից: Այդուհանդերձ, վերը ներկայացված վերլուծությունը կարելի է համարել Հիմնադրամի՝ արտարժութային ռիսկին ենթարկվածության արտացոլումը:

բ) Պարտքային ռիսկ

Պարտքային ռիսկն առաջանում է այն դեպքում, երբ պայմանագրային գործընկերը չի կատարում իր պարտավորությունները, որի հետևանքով Հիմնադրամը կարող է ֆինանսական կորուստներ կրել: Պարտքային ռիսկի առավելագույն ազդեցությունը ներկայացված է Ֆինանսական ակտիվների հաշվեկշռային արժեքներով:

Դրամական միջոցների և դրանց համարժեքների մասով պարտքային ռիսկը փոքր է, քանի որ պայմանագրային գործընկերը հեղինակավոր բանկ է՝ «Ամերիա բանկ» ՓԲԸ, որի վարկանիշը ըստ Moody's/Standard & Poor's միջազգային վարկանշային գործակալության կազմում է b1:

գ) Իրացվելիության ռիսկ

Իրացվելիության ռիսկն այն ռիսկն է, որ Հիմնադրամն ի վիճակի չի լինի մարել իր պարտավորվածությունները:

Հիմնադրամը վարում է իրացվելիության կառավարման քաղաքականություն՝ դրամարկղում և բանկային հաշիվներում պահելով բավարար միջոցներ, ինչպես նաև պահելով բարձր

իրացվելիություն ունեցող ակտիվներ՝ գործառնական պարտավորությունները ժամանակին մարելու նպատակով:

21 Պայմանականություններ

21.1 Ապահովագրություն

Հայաստանում ապահովագրական համակարգը զարգացման փուլում է և ապահովագրության շատ տեսակներ, որոնք լայնորեն տարածված են մյուս երկրներում, Հայաստանում դեռ չեն կիրառվում: Հիմնադրամը չունի ամբողջական ապահովագրական ծածկույթ իր ակտիվների և գործունեության ընդհատման համար, չունի նաև Հիմնադրամի գույքի կամ գործառնությունների հետ կապված պատահարների հետևանքով գույքին կամ շրջակա միջավայրին հասցված վնասի գծով երրորդ կողմի նկատմամբ պարտավորությունների ապահովագրություն: Քանի դեռ Հիմնադրամը համապատասխան ձևով ապահովագրված չէ, գոյություն ունի ռիսկ, որ որոշակի ակտիվների կորուստը կամ ոչնչացումը կարող է անբարենպաստ նյութական ազդեցություն ունենալ Հիմնադրամի գործունեության և ֆինանսական վիճակի վրա:

21.2 Հարկեր

Հայաստանի Հանրապետության հարկային համակարգը համեմատաբար նոր է՝ հաճախակի փոփոխվող օրենսդրությամբ, որը հաճախ մեկնաբանություններ է պահանջում: Հաճախ տարբեր հարկային և իրավասու մարմիններ տարբեր մեկնաբանություններ ունեն: Հարկերը հարկային մարմինների կողմից ենթակա են վերանայման և ուսումնասիրության: Հարկային մարմիններն օրենքով լիազորված են տուգանքներ և տույժեր առաջադրել:

Վերոհիշյալ հանգամանքները Հայաստանում կարող են առաջացնել ավելի մեծ հարկային ռիսկեր, քան այլ երկրներում: Ղեկավարությունը համոզված է, որ հարկային պարտավորությունների գծով կատարել է համապատասխան հատկացումներ հարկային օրենսդրության իրենց մեկնաբանության հիման վրա: Այնուամենայնիվ, հարկային մարմինների մեկնաբանությունները կարող են տարբերվել, և դրանց ազդեցությունը կարող է զգալի լինել:

22 Կապակցված կողմեր

Հիմնադրամի կապակցված կողմերը ներառում են հիմնական ղեկավար անձնակազմը և ընդհանուր վերահսկողության տակ գտնվող կազմակերպությունները:

22.1 Գործարքներ կապակցված կողմերի հետ

Հաշվետու տարվա ընթացքում Հիմնադրամի և իր կապակցված կողմերի միջև իրականացվել են հետևյալ գործարքները, և հաշվետու ամսաթվի դրությամբ մնացորդները հետևյալն են:

Հազար դրամ	2019թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2018թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Գործարքներ		
Ընդհանուր վերահսկողության տակ գտնվող ընկերություններ		
Ստացված հիմնական միջոցներ	21,476	-
Ստացված դրամաշնորհներ	243,400	137,130
Ծառայությունների մատուցում	2,783	9,063
Ստացված ծառայություններ	181,599	249,141

Հազար դրամ	2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Մնացորդներ		
Ընդհանուր վերահսկողության տակ գտնվող ընկերություններ		
Դեբիտորական պարտքեր	131	271
Եկամտին վերաբերող շնորհներ	1,607	32,693
Ակտիվներին վերաբերող շնորհներ	34,798	15,729
Կրեդիտորական պարտքեր	19,221	37,476

22.2 Գործարքներ ղեկավարության և նրանց անմիջական ազգականների հետ

Հիմնական ղեկավար անձնակազմը ժամանակաշրջանների ընթացքում ստացել է հետևյալ վարձատրությունը, որը ներառված է «Փոխհատուցումներ աշխատակիցներին» հոդվածում.

Հազար դրամ	2019թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2018թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Փոխհատուցումներ աշխատակիցներին, ապահովագրություն	935	935

Մնացորդներ

Հազար դրամ	2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Չօգտագործված արձակուրդի գծով պարտավորություն	266	163

Signer: ՀՀ ՊԵԿ
Date: 20.10.2020 16:29